ՅՈՒՆԻՍ 5–Ի ՆԻՍՏԸ

Նախագահում է Ա. Սահակեան: Նիստին ներկայ է նախարարական կազմը՝ նախարարապետ Հ. Օհանջանեանի գլխաւորութեամբ: Ունկնդիրների մասն ու պատշգամբը լեցուած է խուռն բազմութեամբ: Նիստի ընթացքին խորհրդարան մտաւ Ֆրանսական անդրկովկասեան միսսիայի նախագահ Դր Մարտէլը:

Նախագահ. — Նիստը յայտարարելով բացուած՝ դիմում է խորհրդարանին հետևեալ խօսքերով. «Աշխատանքների դադարի միջոցին խորհրդարանն ունեցաւ մի մեծ կորուստ՝ յանձին ամենից սիրուած պատգամաւոր Հմայեակ Մանուկեանի. յարգենք նրա յիշատակը ոտքի կանգնելով (դահլիճը լուռ ոտքի է կանգնում):

Նախագահ. — Խօսքը պատկանում է նախարարապետին:

Նախարարապետ Հ. Օհանջանեան. — Պարոնայք պատգամաւորներ. նախ քան երկրի վիճակի ու կառավարութեան գործունէութեան մասին տեղեկութիւններ տալը, ես կաւելեմ ձեզ մի ուրախ լուր. Հայաստանի հանրապետութիւնը, որ հաշտութեան վեհաժողովի կողմից ճանաչուած էր միայն փաստօրէն, այժմ ճանաչուած է նաև իրաւօրէն (բուռն, երկարատև ծափեր): Մայիս 11–ին, այսինքն այն օրը, երբ հաշտութեան պայմանագիրը յանձնուել է Տաճկաստանին, վեհաժողովում, մեծ պետութեանց ներկայացուցիչների հետ, ներկայ է եղել նաև մեր հանրապետութեան պատուիրակ Ա. Ահարոնեանը, որ ստորագրել է պայմանագրի տակ, որպէս ներկայացուցիչ իրաւազօր և անկախ հայկական պետութեան (բուռն ծափեր):

Մի ամիս սրանից առաջ, երկրի ամենածանր րոպէին դուք պատիւ արիք ինձ յանձնելու կառավարութեան ղեկը: Այդ ժամանակ Հայաստանն ալեկոծուած էր. ծայր էին առել զանազան խռովութիւններ երկրի ներսում, որոնց մեծ մասամբ ակնատես եղաք անձամբ, իսկ մանրամասն նկարագրութիւնները կարդացիք կառավարական հաղորդագրութիւնների մէջ: Երևոյթի գլխաւոր պատճառների բացատրութիւնը շատ հեռու կը տանի մեզ. նոյնիսկ այսօր չպիտի կարողանանք ճշտօրէն պարզաբանել նրանց էութիւնն ու բնոյթը: Կառավարութիւնն արդէն ձեռնարկել է կազմելու մի արտակարգ յանձնաժողով՝ այդ աշխատանքը վերապահելով նրան: Բայց, այսօր իսկ, պարզ է ամենքի համար, որ Հայաստանն ապրում է տնտեսական ճգնաժամ՝ ամենամեծ առիթն ընդհանուր դժգոհութիւնների: Մի երկիր, որ ահա եօթ տարի է ապրում է պատերազմի արհաւիրքների տակ, որի ժողովրդի մեծագոյն մասը դաղթական է ու սեփական տնտեսութիւնից զուրկ, որ չունի արդիւնաբերութիւն և դրամական կայուն արժէք, անխուսափելիօրէն պիտի ընկնէր տնտեսական ճգնաժամի մէջ և, դարձեալ անխուսափելիօրէն, պիտի ծայր առնէր այնտեղ ընդհանուր դժգոհութիւն, ինչ որ այժմ ծաւալուած է Հայաստանում:

Ժողովրդական զանգուածների այդ խուլ տրտունջը փորձեցին օգտագործել մի խումբ մարդիկ՝ բոլշևիկ անուան տակ. նրանք փորձեցին մոլորեցնել ժողովրդին ու զօրքին և խռովութիւններ ստեղծելով՝ առաջ բերել պետական կարգի յեղաշրջում. նրանք ցանկացան Հայաստանում հաստատել խորհրդային իշխանութիւն: Բայց, ինչպէս սպասելի էր, վիժեց նրանց ծրագիրն ու փորձը, որովհետև հայ ժողովուրդը, որքան էլ դժգոհ ներկայ դրութիւնից, իմաստութիւն ունեցաւ ըմբռնելու, որ խռովութիւնները չեն